յիշեալ ազգասէր անձին՝ հոգեկան քաղցր պարտականութիւն համարի ինքեան միջոցաւ Ամսագրոյդ մատուցանել նմա այսու գիր խորին շնորհակալութեան։

(Ստորագրութիւնք)

Համար 63

Ի 14 Մարտի 1877 ամ

Ի Սողդայաք։

---

ՀՈՒՆՁՔ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԱԽԱԼՑԽՈՅ·

---

## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ·

Գիտեմք թէ մի ի բազմազան նպատակաց արդիւնաշատ ամսագրոյդ էր հետախոյզն լինել գտանել զեթ կս մասն որական աշխատութեանց նախնի բանասիրաց և տպագրեալ զայնոսիկ ազատել ի ժանտաց բազմածախ ժամանակին, յորում բազմաթիւ երկասիրութիւնք և քրտնաջան տքնութիւնք մերոց նախնի իմաստասիրաց իսպառ չքացեալ անդարմանելի կորուստ յետնորդացս առթեցին։

Առ ի մերովսանն նպաստել արդարացի ըղձից և ձգտողութեանց պատուական ամսագրոյդ՝ աւանիկ առաքեմք զգրութիւն ինչ Հունձք Կարապետեան դպրոցի անուանեալ, երկասիրութիւն հանգուցեալ Յակոբայ վարժապետի Կարենեան, հաւաքեալ հրամանաւ Նորին բարձր Սրբազնութեան երջանկայիշատակ տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի ի 1836 ամի ի Նոր քաղաք Հայոց Ախալցխոյ։ Յուսամք զի խմբագրութիւն Ձեր գտցէ զայս գրուոր հնութիւն արժանաւոր տպագրութեան։

Ի սրտէ ցանկացող յառաջադիմութեան Ամսագրոյդ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ԲԱՋԱՋՆՈՒՆԻ·

Ի 16 Մարտի 1877 ամ

ՅԱխալքալաք։

Ի պատէհ միջոցի՝ յիշեալ գրուածոյ մի քանի կարեւոր մասը քաղուածօրէն կհրատարակուի։

---

Թախանձանօք խնդրուած է հետագայ հաշուոյ հրատարակութիւնը։

ՀԱՇԻՒ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՍԻՑ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՐԲՈՒՀՒՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅՈՑ ՍԻՄՖԵՐՈՊՈԼ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՐՒՈՅ ԸՆԹԱՑԻ 1876 ԱՄԻՆ·

---

### Ալծէրք արդէնց·

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ծախուած մոմին եկամուտը (վիրուշկայ) ի բաքանչիր ամսոյ մէջ առանձին, զոր օրինակ Յունվար՝ 1 փութ 19 ֆ Փետրվար՝ 21 ֆունտ. Մարտ՝ 1 փ. 8¹/₄ ֆ. Ապրիլ՝ 1 փ. 30 ֆ Մայիս՝ 31¹/₂ ֆ. Յունիս՝ 1 փ. 3¹/₄ ֆ. Յուլիս՝ 29 ֆ. Օգոստոս՝ 32 ֆ. Սեպտեմբեր՝ 38¹/₂ ֆ Հոկտեմբեր՝ 20 ֆ Նոյեմբեր՝ 17¹/₂ ֆ. Դեկտեմբեր 20 ֆ. ընդ ամէնը 10 փութ 31¹/₂ ֆ և ծախուած լինելով ֆունտը 2 րուբլիով՝ գոյացել է . . . | 862 | 91 |
| Վեց պահէ՝ սեղանի և ջահերու լուսաւորութեան համար . . . | 103 | |
| Տասն անգամ՝ պատահած նշխեց տեղեաց պատարագէ՝ լուսաւորութեան համար . . . . . . . . . | 166 | |
| Առանձին պատարագէ՝ լուսաւորութեան համար . . . . . . . | 14 | 50 |
| Աւելցած կոճառ 1 փ. 7¹/² ֆ. հաշուելով ֆունտը 50 կոպ. . . . | 23 | 75 |
| Ծախուած խունկէ . . . . | 22 | 54 |
| Եկեղեցական աւերակ տունէն ապառիկ անցեալ տարւոյ . . . . | 16 | |